



*Այս վերլուծությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակում: Դրա բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Հայկական ճամբար» ՀԿ-ն և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և/կամ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տեսակետները:*

**Երևան քաղաքում տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար տրանսպորտային ծառայությունները մատչելի դարձնելու նպատակով 2015-2016 թթ բյուջեից իրականացված ծախսերի մշտադիտարկման վերլուծություն**

Վարդուհի Արամյան

Մամվել Ռոստոմյան

Նարեկ Բոցինյան

Սույն վերլուծության նպատակն է ուսումնասիրել և գնահատել 2014-2016թթ. Երևանի համայնքային բյուջեից ներքաղաքային տրանսպորտը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու նպատակով կատարված ծախսերի արդյունավետությունը:

Վերլուծության առջև դրվել են հետևյալ խնդիրները.

1. Պարզել 2014-2016թթ. Երևանի համայնքային բյուջեից ներքաղաքային տրանսպորտը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու նպատակով կատարված ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեում:
2. Պարզել 2014-2016թթ. Երևանի համայնքային բյուջեից ներքաղաքային տրանսպորտը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու նպատակով կատարված ծախսերի դինամիկան:
3. Պարզել Երևանի ներքաղաքային տրանսպորտը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու նպատակով կատարված ծախսերի փաստացի կիրառելիությունն ու արդյունավետությունը:

Ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել Երևանի համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրված բյուջեների տարեկան հաշվետվությունները, հարցումներին ի պատասխան համայնքապետարանից ստացված տեղեկատվությունը, «armeps.am» կայքում տեղադրված գնումների պայմանագրերը, «Երևան ավտոբուս» ՓԲԸ-ում կատարված դիտարկումները:


**ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՅՈՒՋԵՆ 2014-2016 ԹԹ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՅՈՒՋԵՈՒՄ**

Համայնքային բյուջեի կառուցվածքում մատչելի հանրային տրանսպորտի ոլորտում կատարված ծախսերը 2014-2016 թթ. համապատասխանաբար կազմել են 0,04%, 0,05%, 0,02% ընդհանուր բյուջեից: Ինչպես տեսնում ենք, մատչելի հանրային տրանսպորտի ոլորտին համայնքային բյուջեից հատկացված միջոցները նվազել են մոտ 0.03%:


Դիտարկենք մատչելի հանրային տրանսպորտի ոլորտում կատարված ծախսերի տեսակարար կշիռը՝ Երևան համայնքի 2014-2016թթ. Բյուջեներում (տե՛ս Գծ.1)

**Գծապատկեր 1**

**Մատչելի հանրային տրանսպորտի ոլորտում կատարված ծախսերի տեսակարար կշիռը՝ Երևան համայնքի 2014-2016թթ. Բյուջեներում**



Դիտարկենք 2014-2016թթ. ոլորտում կատարված ծախսերի դինամիկան՝ բացարձակ ցուցանիշով (տե՛ս Գծ.2):



Գծապատկերից երևում է, որ վերջին 2016 թվականի հատկացումով համայնքային


բյուջեից ավելի քիչ ֆինանսական միջոցներ են ուղղվել ներհամայնքային հանրային տրանսպորտի մատչելիության ապահովմանը: Հատկանշական է, որ 2015թ. պլանավորված ցուցանիշը 2014թ. նկատմամբ 22,1%-ով ավելի է: Ավելին, 2015թ. պլանավորված ցուցանիշը 128%-ով գերազանցում է 2014թ. կատարողականը, սակայն 2016թ. կատարողականը մոտ 350%-ով փոքր է 2015թ. տարեկան կատարողական ցուցանիշից, ինչը ցույց է տալիս ՏԻՄ բյուջեի անկատար պլանավորումը: Սա խոսում է համայնքային բյուջեի պլանավորման մեջ թերացման մասին: Այն կարող է պայմանավորված լինել պլանավորման մեթոդի ընտրությամբ կամ ոլորտային խնդիրներին և դրանց կարևորության աստիճաններին ոչ բավարար իրազեկ լինելու հանգամանքով:

**2014-2016 ԹԹ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԵՐՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ՄԱՏՉԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ**

Ծախսերի արդյունավետությունը հասկանալու նպատակով դիտարկվել են 2014-2016թթ Երևանի համայնքապետարանի կողմից կազմակերպված գնումների գործընթացները, դրանց արդյունքները և փաստացի ձեռք բերված գույքն ու դրա կիրառելիությունը:

Երևանի համայնքապետարանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20, 27 և 28 հոդվածների համապատասխան՝ սեփական կարիքների համար ՀՀ գնումների էլեկտրոնային միասնական համակարգով 2014-2016 թթ հայտարարել է գնումների բաց մրցույթ:


Բոլոր մրցույթներին մասնակցել և հաղթող է ճանաչվել միայն «Կամար» ՓԲԸ-ն:



«ԵՔ-ԲԸԱՊԶԲ-16/8» ծածկագրով բաց ընթացակարգով անցկացվող գնումների գնահատող հանձնաժողովին 2016 թվականի ապրիլի 7-ին ուղված գրության մեջ «Կամար» ՓԲԸ-ն նշել է՝ «Կամար» ՓԲ ընկերությունը քաղաքային ավտոբուսների վրա հատուկ վերելակային հարմարանքների տեղադրման համար առաջարկում է Չինական **Changzhou Xinder-Tech Electronics Co. LTD** ընկերության հատուկ **HIGER-KLQ6770G** տիպարի ավտոբուսի համար Երևանի համայնքապետարանի կողմից հաստատված տեխնիկական բնութագրի չափորոշիչներին համապատասխան նախագծված և արտադրված **WL-UVL/Under Vehicle Wheenlchair Lifts/-700II-S (695\*1100)** սերիայի հատուկ վերելակ:»

Նույն գրության մեջ կազմակերպությունը նշում է, որ *արդեն իրենց կողմից տեղադրվել են 20 վերելակներ, որոնք հաջողությամբ շահագործվում են ավտոբուսների վրա:*

Ձեռք բերված վերելակների վճարումները ըստ փուլերի



Ըստ Երևանի համայնքապետարանի կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության «10» «հուլիսի» 2015 թ կնքված N «ԵՔ-ԲԸԱՊԶԲ-15/23» գնման պայմանագրի տեխնիկական պայմաններ հավելված 6-րդ կետում նշվում է . «Վերելակի տեղադրման ժամանակ *հաշվի առնել HIGER-KLQ6770G* մակնիշի ավտոբուսի կառուցվածքում կատարված փոփոխությունների անվտանգությունը և հուսալիությունը»

Սակայն «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ում մեր կողմից իրականացված դիտարկումների և հարցազրույցների ժամանակ անձնակազմի ներկայացուցիչները նշել են, որ ի սկզբանե իրենք տեղեկացրել են Չինական ավտոբուսների արտադրող HIGER ֆիրմային նման փոփոխություններ կատարելու մտադրության մասին և նրանցից ստացել են բացասական եզրակացություն: Չինական գործարանը ավտոբուսների վրա







«Հայկական Կամփ» լուրի և աշխատանքների կայք» Հ. 1



«Հայկական ճամբար» լեզվի և առագաստանավի դպրոց» ՀԿ

“Armenian Camp” NGO



«Երևանի ավտոբուս» ՓԲԸ –ում դիտարկումների ժամանակ հարց ու պատասխանի միջոցով պարզ դարձավ, որ երբևէ 25 վերելակները միասին չեն շահագործվել երթուղում:

Եվ առհասարակ այս 5 տարիների ընթացքում շահառուները շատ քիչ են օգտվել վերելակներով կահավորված ավտոբուսներից:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **Եզրակացություն 1**

2014-2016թթ. Երևանի համայնքային բյուջեից հաշմանդամություն ունեցող անձանց համար ներքաղաքային տրանսպորտը մատչելի դարձնելու նպատակով կատարված 87741600 ՀՀ դրամ ծախսը անարդյունավետ է եղել:

### **Առաջարկություններ**

Սկսել ներքին հետաքննություն և պարզել, ծախսերի իրականացման, ո՞ր փուլում (պլանավորման, գնումների, վերահսկման, գնահատման) են տեղի ունեցել թերացումները, պարզել պատճառները:

Մինչև Երևան համայնքի ներհամայնքային հանրային տրանսպորտի նոր համակարգի ներդրումը, Երևան համայնքի 2019 և 2020 թթ բյուջեներով սահմանել ծախսային հոդվածներ 25 ավտոբուսները հնարավորինս մատչելի դարձնելու նպատակով այդ գործում սերտ համագործակցություն ապահովելով շահագրգիռ բոլոր կողմերի հետ:

### **Եզրակացություն 2**

2014-2016թթ. Երևանի համայնքային բյուջեից հաշմանդամություն ունեցող անձանց համար ներքաղաքային տրանսպորտը մատչելի դարձնելու նպատակով կատարված ծախսերի և գործողությունների ազդեցության մշտադիտարկում և գնահատում չի իրականացվել:

### **Առաջարկություններ**

Մշակել և կիրառել հաշմանդամություն ունեցող անձանց համար ներքաղաքային տրանսպորտը մատչելի դարձնելու նպատակով նախկինում և պլանավորված ծրագրերի ազդեցության մշտադիտարկման և գնահատման պլան:

Երևան համայնքի ներհամայնքային հանրային տրանսպորտի նոր համակարգի մատչելիությունը պլանավորելու և ապահովելու ժամանակ իրականացնել կարիքի գնահատում և հաշվեի առնել շահառու խմբի դիտարկումներն ու առաջարկությունները: